

«Հագարանյակի մարտահրավեր-Հայաստան» (ՀՄՀ) ծրագիր

«Հագարանյակի մարտահրավեր-Հայաստան» (ՀՄՀ) ծրագրի մեկնարկային փուլում՝ 2006 թվականի ապրիլի 6-ին, քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչների ընդհանուր ժողովում ձեռնարկվել է 7 հոգուց բաղկացած Քարտուղարություն (ՀՀ Ֆինանսների եւ Էկոնոմիկայի փոխնախարար, հասարակական կազմակերպություններից ծրագրի նախապատրաստական փուլում ընտրված 3 հոգի, ՀՄ ամերիկյան կողմից 1 հոգի, 1-ական հոգի՝ տեղական եւ միջազգային հասարակական կազմակերպություններից), որը մշակել է Շահառուների Խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընտրության ստորեւ բերված Կարգը:

Շահառուների Խորհրդում Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընտրության Կարգ

Կարգն ընդգրկում է հետեւյալ բաղադրիչները.

- Ø Քվեարկության մասնակցություն
- Ø Թեկնածույան առաջադրում
- Ø Ընտրություն
- Ø Ետ կանչ
- Ø Հաշվետվողականություն

1. Քվեարկության մասնակցություն

1.1. Քվեարկում են Հայաստանում գործող այն հայաստանյան, միջազգային հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները, միությունները, որոնք գործընթացին մասնակցելու համար մինչեւ 2006 թվի ապրիլի 26-ը, ժամը 18-ը ՀՀ Ֆինանսների եւ Էկոնոմիկայի նախարարության 328 սենյակ են ներկայացրել կազմակերպության կնիքով վավերացված ընտրությունների մասնակցության լրացված հայտը, որի ձեռք տեղադրված է www.mca.am կայքում:

1.2. Քվեարկության մասնակիցը քվեարկության է ներկայանում անձնագրով:

2. Թեկնածույան առաջադրում

2.1. Շահառուների խորհրդում որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ ընտրվելու համար հայտում հատուկ նշում է արվում 2.2 կետում:

2.2. Կազմակերպությունից բավարար քվեներ հավաքելու դեպքում Շահառուների խորհրդում ընտրվում է կազմակերպության լիազորված ներկայացուցիչը: Այդ անձի կազմակերպությունից դուրս գալու դեպքում Շահառուների խորհրդում այդ թափուր տեղը լրացնում է քվեարկության արդյունքներով՝ վարկանիշով հաջորդող կազմակերպության ներկայացուցիչը:

2.3. Թեկնածուների մասին տեղեկատվությանը հնարավոր կլինի ծանոթանալ www.mca.am կայքից եւ ՀՀ Ֆինանսների նախարարության 328 սենյակից՝ ապրիլի 27-ից, մայիսի 2-ը՝ ներառյալ:

3. Ընտրություն

3.1. Շահառուների խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ կազմը 5 հոգի է, նրանք առաջին անգամ ընտրվում են 2 տարբեր ժամկետներով. 3 հոգին՝ 2 տարի ժամկետով, 2 հոգին՝ 1 տարի ժամկետով: Առավել քվեներ հավաքած 3 թեկնածու-կազմակերպությունները ընտրված են համարվում 2 տարով:

3.2. Շահառուների խորհրդը, ձեռավորվելուց հետո իր կազմը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներով համալրելու որոշում կայացնելու եւ նրանց թիվը հինգից մինչեւ ինը դարձնելու պարագայում, նոր անդամների համալրումը կատարվելու է ըստ թեկնածուների հավաքած քվեների առաջնահերթության: Շահառուների խորհրդի գործունեության առաջին տարում խորհրդի հասարակական կառուցի 6-րդ անդամը իր պարտականություններն ստանձնում է 2 տարով, 7-րդ անդամը՝ 1 տարով, 8-րդ անդամը՝ 2 տարով, 9-րդ անդամը՝ 1 տարով:

3.3. Այնուհետ, Շահառուների Խորհրդի անդամներն ընտրվում են 2 տարով:

3.4. Հավասար քվեների առկայության պարագայում Շահառուների խորհուրդ անցնող կազմակերպության ներկայացուցիչն որոժում է ընտրական հանձնաժողովը՝ վիճակահանությանը:

3.5. Ընտրությանը մասնակից յուրաքանչյուր կազմակերպություն տիրապետում է 5 քվեի, որոնք պարտավոր է՝ իր հայեցողությամբ տալ 5 տարբեր կազմակերպությունների: Քվեաթերթիկում 5-ից ավելի քվեի առկայության դեպքում, քվեաթերթիկը համարվում է անվավեր:

3.6. Շահառուների խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից ընտրված են համարվում այն 5-ը, ովքեր մյուսներից առավել քվեներ են ստացել:

3.7. Շահառուների խորհրդից Ծրագրի Կառավարման խորհուրդ ընտրվելու դեպքում Շահառուների խորհուրդը համալրվում է քվեարկության արդյունքներով առավելագույն ձայներ հավաքած անմիջականորեն հաջորդող կազմակերպությունով:

3.8. Շահառուների խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ տեղը թափուր մնալու դեպքում այն լրացվում է քվեարկության արդյունքներով առավելագույն ձայներ հավաքած անմիջականորեն հաջորդող կազմակերպությունով:

3.9 Շահառուների խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ եւ իր ներկայացրած կազմակերպության շահերի պահպանում եւ անվիճելի բախման դեպքում ներկայացուցչը հրաժարվում է Խորհրդում իր զբաղեցրած տեղից:

3.10. Ընտրության գործընթացը կազմակերպում է Ընտրական հանձնաժողովը, որն ապահովում է նաեւ ընտրությունների անցկացման թափանցիկությունը, հրապարակայնությունը, անհրաժեշտ փաստաթղթերի մշակման գործառույթները եւ ՉԼՄ-ների իրազեկումը:

3.11. Քվեաթերթիկում նշվում է թեկնածուի անուն-ազգանունը եւ կազմակերպությունը: Թեկնածուների անունները շարադրվում են այբբենական կարգով: Քվեաթերթիկում նշումները կատարվում են թեկնածուի ազգանվան դիմաց՝ վանդակում լատինատառ V նշանով:

3.12. Քվեաթերթիկները նախապատրաստվում են հայտատուների թիվը 5 տոկոսով գերազանցող քանակով:

3.13. Քվեաթերթիկի ձեւը սահմանում է Ընտրական հանձնաժողովը:

3.14. Քվեաթերթիկները բազմացվում են Հազարամյակի Մարտահրավերների հայաստանյան թիմի կողմից, ընտրական հանձնաժողովի մասնակցությամբ:

3.15. Քվեաթերթիկների հակառակ երեսին ստորագրում են Ընտրական հանձնաժողովի անդամները:

3.16. Քվեաթերթիկները Հագարամյակի Մարտահրավերների հայաստանյան թիմի ներկայացուցիչը տրամադրում է Ընտրական հանձնաժողովի նախագահին 2006 թվի մայիսի 2-ին, ժամը 9-ին, քվեարկության վայրում:

3.17. Թեկնածուները, ցանկության դեպքում, քվեարկության օրը, ժամը 9:00-9:45-ի ընթացքում կարող են քվեաթերթիկների հակառակ երեսին գետեղել իրենց ստորագրությունները:

3.18. Քվեարկությունը կատարվում է.

- 2006 թվի Մայիսի 2-ին, ժամը 10.00-17.00 Հայաստանի Ամերիկյան Համալսարանի նախասրահում, հասցեն. Բաղրամյան պողոտա՝ 40:
- Քվեարկությունը փակ է եւ գաղտնի:
- Ընտրության արդյունքներն ամփոփվում են նույն օրը ժամը 17:00-21:00-ը եւ հրապարակվում են անմիջապես՝ նույն օրը:
- Ընտրությանը դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել ցանկացած ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի ներկայացուցիչ, առանց նախնական հայտավորման:

3.19. Ընտրական հանձնաժողովը ձեւավորվում է Քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչների ընդհանուր ժողովում՝ ապրիլի 21-ին:

3.20. Ընտրական հանձնաժողովը ձեւավորվում է առաջադրմամբ կամ ինքնառաջադրմամբ, բաղկացած է 5 կամ 7 հոգուց:

3.21. Շահառուների խորհրդում առաջադրվող թեկնածուները չեն կարող լինել ընտրական հանձնաժողովի անդամ:

3.22. Ընտրական հանձնաժողովում ընդգրկված անձը իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը:

4. Ետ կանչն իրականացվում է.

4.1. Շահառուների խորհրդի կոնկրետ անդամի ետկանչը տեղի է ունենում այդ անդամի ընտրությանը մասնակից եւ քվեաթերթիկ ստացած կազմակերպությունների կեսից ավելիի գրավոր ստորագրությամբ հաստատված պահանջի դեպքում:

5. Հաշվետվողականություն

5.1. Եռամսյա հաշվետվությամբ Շահառուների խորհրդի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հատվածը հանդես է գալիս ընտրող կազմակերպությունների համաժողովների առաջ եւ տարածում է գրավոր հավետվություն:

Հաշվետվություն ներկայացնելու մասին տեղեկատվությունն իրականացվում է թերթում հայտարարության տպագրմամբ, ռադիոյով եւ հեռուստատեսությամբ հաշվետվությունից առնվազն երկու շաբաթ առաջ:

21 ապրիլի, 2006

Հաստատված է քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչների ընտրության ժողովում: